# Saint Yeghiche Armenian Church Parish
# Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

**Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan**
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
*Pastoral office* t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
**www.styeghiche.org.uk** **https://www.facebook.com/StYeghiche**



**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵԶՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN**

**1: Today's Scripture Reading, 30th November 2025 Bulletin 50/2025**


## Second Sunday of Advent

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 4 :1-11

**ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՃԵԼԻ ԿԵԱՆՔ ՄԸ**

Ալ հիմա, եղբա՛յրներ, ձեզի կ'աղաչենք ու կը յորդորենք ձեզ Տէր Յիսուսով, որ ինչպէս մեզմէ սորվեցաք այնպէս քալէք ու Աստուծոյ հաճոյ ըլլաք, ա՛լ աւելի յառաջանաք անոր մէջ: Քանզի գիտէք թէ ի՛նչ պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսով: Վասն զի Աստուած կը կամենայ որ դուք սուրբ ըլլաք, եւ կենաք պոռնկութենէ. ձեզմէ ամէն մէկը գիտնայ իր մարմինը սրբութիւնով ու պատուով պահել. ո՛չ թէ ցանկութեան կիրքով, ինչպէս հեթանոսները, որոնք Աստուած չեն ճանչնար: Չըլլայ որ այդ բանին մէջ չափէ անցնի մէկը ու իր եղբայրը զրկէ, վասն զի Տէրը այդ բոլոր բաներուն համար վրէժխնդիր է. ինչպէս նախապէս ըսինք ձեզի ու վկայութիւն տուինք: Վասն զի Աստուած մեզ պղծութեան չկանչեց, հապա սրբութեան: Ուստի ան որ կ'անարգէ՝ ոչ թէ մարդ մը կ'անարգէ, հապա Աստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ մեզի տուաւ:

Բայց եղբայրսիրութեան մասին պէտք չէ ձեզի բան գրել, վասն զի դուք Աստուծմէ սորված էք մէկզմէկ սիրել եւ արդէն կը սիրէք դուք Մակեդոնիայի մէջ եղող բոլոր եղբայրները, սակայն կ'աղաչենք ձեզի, եղբա՛յրներ, որ ա՛լ աւելի առատանաք եւ ջանաք հանդարտ կենալ ու ամէն մէկդ իր գործը գործէ ու ձեր ձեռքերովը աշխատիք, (ինչպէս ձեզի պատուիրեցինք), որպէս զի դուրսիններուն հետ պարկեշտութեամբ վարուիք ու բանի մը կարօտ չըլլաք:

## The Epistle of St Paul to the 1 Thessalonians 4:1-11;

**Living to Please God**

As for other matters, brothers and sisters, we instructed you how to live in order to please God, as in fact you are living. Now we ask you and urge you in the Lord Jesus to do this more and more. For you know what instructions we gave you by the authority of the Lord Jesus.

It is God's will that you should be sanctified: that you should avoid sexual immorality; that each of you should learn to control your own body a in a way that is holy and honorable, not in passionate lust like the pagans, who do not know God; and that in this matter no one should wrong or take advantage of a brother or sister. b The Lord will punish all those who commit such sins, as we told you and warned you before. For God did not call us to be impure, but to live a holy life. Therefore, anyone who rejects this instruction does not reject a human being but God, the very God who gives you his Holy Spirit.

Now about your love for one another we do not need to write to you, for you yourselves have been taught by God to love each other. And in fact, you do love all of God's family throughout Macedonia. Yet we urge you, brothers and sisters, to do so more and more, and to make it your ambition to lead a quiet life: You should mind your own business and work with your hands, just

**Our Aim;**

**St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.**

as we told you,

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 13:1-9

**ՄԵՂՔԵՐԷՆ ԴԱՌՆԱԼ ԿԱՄ ՄԵՌՆԻԼ**

Ոմանք այն ատեն ներկայ գտնուելով՝ պատմեցին անոր Գալիլիացիներուն մասին, որոնց արիւնը Պիղատոս իրենց զոհերուն հետ խառնեց: Յիսուս ըսաւ անոնց. *«Կը կարծէ՞ք թէ այն Գալիլիացիները բոլոր Գալիլիացիներէն աւելի մեղաւոր էին, որոնք այսպիսի բաներ քաշեցին: Ձեզի կ՚ըսեմ. ‘Ոչ’. հապա եթէ չապաշխարէք, ամէնքդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: Կամ թէ այն տասնըութը հոգին, որոնց վրայ Սելովամի աշտարակը ինկաւ եւ զանոնք մեռցուց. կը կարծէ՞ք թէ անոնք Երուսաղէմի մէջ բնակած բոլոր մարդոցմէ աւելի պարտաւոր էին: Ձեզի կ՚ըսեմ. ‘Ոչ’. հապա եթէ չապաշխարէք, ամէնքդ ալ նոյնպէս պիտի կորսուիք»:*

**ԱՆՊՏՈՒՂ ԹԶԵՆԻԻՆ ԱՌԱԿԸ**

Այս առակն ալ ըսաւ. *«Մարդ մը իր այգիին մէջ տնկուած թզենի մը ունէր, եկաւ անկէ պտուղ քաղելու եւ չգտաւ: Ուստի ըսաւ այգեպանին. ‘Ահա երեք տարի է, որ կու գամ այդ թզենիին վրայ պտուղ կը փնտռեմ ու չեմ գտներ, ա՛լ ատիկա կտրէ, ինչո՞ւ համար գետինը խափանէ’: Անիկա պատասխան տուաւ ու անոր ըսաւ. ‘Տէ՛ր, այս տարի ալ ատիկա թող տուր, մինչեւ անոր բոլորտիքը բրեմ ու թրիք դնեմ եւ եթէ պտուղ տայ՝ աղէկ, ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ ատիկա’»:*

## The Holy Gospel of Jesus Christ according to Luke 13:1-9

**Repent or Perish**

Now there were some present at that time who told Jesus about the Galileans whose blood Pilate had mixed with their sacrifices. Jesus answered, "*Do you think that these Galileans were worse sinners than all the other Galileans because they suffered this way? I tell you, no! But unless you repent, you too will all perish. Or those eighteen who died when the tower in Siloam fell on them—do you think they were more guilty than all the others living in Jerusalem? I tell you, no! But unless you repent, you too will all perish.*"



Jesus preaching to the multitude

Then he told this parable: "*A man had a fig tree growing in his vineyard, and he went to look for fruit on it but did not find any. So he said to the man who took care of the vineyard, 'For three years now I've been coming to look for fruit on this fig tree and haven't found any. Cut it down! Why should it use up the soil?'*

*" 'Sir,' the man replied, 'leave it alone for one more year, and I'll dig around it and fertilize it. If it bears fruit next year, fine! If not, then cut it down.' "*

**Մայրը յոյս է**

**- Մայրը լոյս է**
**- Մօր տաքութիւնը մօմի լոյս է**
**- Ցաւալի է որ մօմը հալվում է, Մայրը հալվում է եւ իր կիանքը վերջանում է**
**- Սարի պէս հզօր կանգնած է մէջքիտ, Բայց իր տեղը այսօր անչափ դատարկ է**
**Սիրելի Մայրիկ քեզ սիրել ենք միշտ- միշտ էլ կը սիրենք Դու մեր սրտում էս մինչ հավիտեան**

**Անի Անդրիասեան**

**Dear Parishioners and Armenian Community Members:**

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for <u>all</u> to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your <u>time and financial contribution</u> to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

## Սուրբ առաքյալների և մեր առաջին լուսավորիչներ Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի հիշատակության օր




Ս. Թադեոսը և Ս. Բարդուղիմեոսը Քրիստոսի անխոնջ 12 առաքյալներից էին, որոնք գալով Հայաստան՝ քրիստոնեություն քարոզեցին հայ ժողովրդին՝ արժանանալով «առաջին լուսավորիչներ» կոչմանը: Դեռևս քրիստոնեության արշալույսին նրանք նահատակվեցին Հայաստանում: Առաքյալների գործունեության արդյունքում 301 թվականին հայ ժողովուրդն աշխարհում առաջինը քրիստոնեությունը հռչակեց իբրև պետական կրոն: Հիրավի, այս սրբազան առաքյալների դերը կարևորվում է երկհազարամյա քրիստոնյա հայ ժողովրդի կյանքում:

Հայ Առաքելական Եկեղեցին սուրբ առաքյալների և մեր առաջին լուսավորիչների՝ Թադեոսի և Բարդուղիմեոսի հիշատակը տոնում է Հիսնակի Բ կիրակիին նախորդող շաբաթ օրը:

## Commemoration of the Apostles St. Thaddeus and St. Bartholomew, the first preachers of Christianity in Armenia




Apostles St. Thaddeus and St. Bartholomew were two of the twelve Apostles of Christ, who came to Armenia and preached Christianity in Armenia deserving the title "the first illuminators". Still at the dawn of Christianity they were martyred in Armenia. It was the result of their preaching and martyrdom that the Armenian people, being the first nation in the world, proclaimed Christianity as the state religion. Indeed, Apostles St. Thaddeus and St. Bartholomew played an important role in the history of 2000-year-old Christian Armenian nation which has unshaken faith and keen love towards its Mother Church.

Each year a Divine Liturgy is celebrated in the Cathedral of the Mother See of Holy Etchmiadzin in the memory of St. Apostles.






Registered Charity No. 117340

**Dear Parishioners**
**and**
**Armenian Community Members**

**St Yeghiche Armenian Church, has published its 2026 wall calendar, with both Armenian Religious Feast dates and U.K. holiday dates.**

**These are out for sale at St Yeghiche Armenian Church, from this Sunday 30th November, 2025 and till stock lasts.**

**We encourage every Armenian household to have one, and bring our Lords blessing to your home and family.**

**Thank you for your support**
**St Yeghiche Armenian Church Parish Council**

**Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.**

## 3: This week's message from our Priest in Charge

**Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն :

***«Եւ եթէ մի որեւէ անդամ ցաւ է զգում, նրա հետ ցաւ են զգում բոլոր անդամները. եւ եթէ մի անդամը փառաւորւում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները. արդ դուք մարմինն էք Քրիստոսի եւ անդամները՝ նրա անդամներից»*** (Ա. Կորնթ. 12:26-27):

Քրիստոսի հոգեւոր ընտանիքի՛ անդամներ,

Մենք կապուած ենք միմեանց՝ ըստ հոգեւոր այն պորտալարի, որ դարձնում է մեզ Հայր Աստծոյ եւ Մայր Եկեղեցու զաւակներ: Մենք, օրհնութիւն կկոչէք թէ դատապարտութիւն, կապուած ենք միմեանց  եւ ազդեցութիւն ունենք իրար վրայ՝ մեր կեանքով, սիրով, խնամքով, օգնելով կամ խանգարելով, մեր օրինակով ոգեւորելով կամ գայթակղելով: Այս յարաբերութեան մէջ կայէնական անտարբեր սառնութիւնը տեղ չի կարող ունենալ, եթէ մենք ազնիւ ենք Աստծոյ եւ միմեանց նկատմամբ հաւատքի կեանքում:

Յանկացած մարդու եթէ հարցնէք, թէ որն է քրիստոնէական կրօնի գլխաւոր պատուիրանը, առանց երկմտանքի պատասխան կտայ. «ՍԻՐԵՑԷՔ ԶՄԻՄԵԱՆՍ»: Յետաքրական խոկման նիւթ է այն, որ Քրիստոս ոչ թէ յորդորեց, խորհուրդ տուեց, մեզ համար յարմար կամ ցանկալի նկատեց, այլ պատուիրան տուեց միմեանց սիրել, ինչպէս Ինքը մեզ սիրեց: Սա ցանկութեան կամ քմահաճոյքի հարց չէ:  Զգացի՞նք Քրիստոսի՝ մեր նկատամբ սիրոյ մեծութիւնը, ընդառաջ գնացի՞նք Իր կանչին, մկրտուեցի՞նք Իր անունով, ուրեմն մեր կեանքի գլխաւոր կանոնը, հրամանակարգը, սահմանադրութիւնը դարձրինք Փրկչի Աւետարանը: Այնտեղ յստակ ասւում է, որ մենք չպիտի վախենանք մեր կեանքի եւ փրկութեան ընհանուր թշնամու դէմ պատերազմի մէջ, քանի որ մենակ չենք, քանի որ ունենք յաղթող Քրիստոսին եւ նաեւ ունենք իրար: Պատերազմի մէջ շատ կարեւոր է, որ ամէն մարտնչող ուսով եւ թիկունքով զգայ վստահելի ու սիրելի ընկերոջ ներկայութիւնը, գործակցութիւնը, սէրը, մէկ օրգանիզմ լինելը:

Եթէ իրար չսիրենք, չենք ցաւայ մեր հաւատակցի, դաւանակցի, ազգակցի համար: Ըստ Աւետարանի՝ Եկեղեցին Քրիստոսի մարմինն է, ուր բոլորս այդ մարմնի անդամներն ենք, եւ այդ մարմին ցաւն էլ, փառաւորումն էլ մեզ է վերաբերում:

2020 թուակինի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսները մեզ համար կյիշուեն իբրեւ հերսական ու անհաւասար պատերազմի, բայց նաեւ պարտութեան, ցաւի եւ ամօթի ամիսներ: Շատերը գուցէ ուրախութեամբ արձանագրեցին, որ վերջ, աւարտուեց պատերազմը, թէկուզ ամօթալի, բայց հաշտութեան պայման կայ՝ չանդրադառնալով, որ բուն, մեծ  պատերազմը գուցէ նոր սկսուի: Մինչ վաղուայ օրուան ուղղուած կոչերը կրկնելը, սակայն, պէտքն ու պարտականութիւնն ունենք քննելու՝  երեկ եւ այսօր ի՞նչ եղաւ քրիստոնէական եւ ազգային մեր համերաշխութեան ու սիրոյ ոգուն, քրիստոնէաբար իրարով ուրախանալու եւ միմեանց ցաւով տառապելու միաանականութեան հետ:

Ճիշտ ախտորոշումը հիմքն է ճիշտ բուժման: Իսկ որ մեր ազգային-հոգեւոր կեանքն ախտորոշման եւ բուժման պէտք ունի, կասկածից վեր է: Արդեօ՞ք մենք  ցաւում էինք միմեանց ցաւով եւ ուրախանում մեր ազգակցի պատիւներով եւ փառաւորումով: Գուցէ այո, բայց միայն այն դէպքում, երբ մենք իրար դիտում էինք իւրային աւելի քաղաքական, կուսակցական շահի աչքով, եւ ոչ ազգի, Հայրենիքի, Եկեղեցու զաւակ լինելով: Մենք պատրաստ էինք եւ ենք Քրիստոս դաւանող եւ Հայրենիքի համար կեանք տուող մարդու նկատմամբ թշնամանալ զուտ նրա համար, որ նա հէնց մեր քաղաքական թեւից չէ: Եւ հակառակը՝ իւրային համարել եւ առաջ մղել բարոյական, ազգային եւ հոգեւոր իմաստով հիւանդ ու անառողջ մէկին՝  կարեւոր դիտելով աւելի կուսակցական կամ քաղաքական թիմի շահը, քան երկրի, Եկեղեցու կամ պետութեան շահը: 1700-ամեայ հոգեւոր յիշողութիւնն անգամ մեզ պետք է զգաստացնէր, որ յանուն Աստծոյ եւ յանուն Հայրենիքի աւելի միաբան պիտի լինէինք, իրար աւելի պիտի սիրէինք՝ յիշելով, որ ***«եթէ մի որեւէ անդամ ցաւ է զգում, նրա հետ ցաւ են զգում բոլոր անդամները»*** սկզբունքը ներքին համայնական առողջութեան գրաւականն է, քանի որ ցաւը օգնում է՝ ուշադիր լինելու, հասկանալու եւ բուժելու խնդիրը: Մենք այնքան չսիրեցինք, որ մերը համարէինք այն ցաւը, որ պետք է զգացած լինէինք, եթէ սիրոյ հաղորդութեան մէջ լինէինք միմեանց հետ: Չէ՞ որ ***«դուք մարմինն էք Քրիստոսի եւ անդամները՝ նրա անդամներից»*** խօսքով պիտի կապուծա զգանք իրար երկնային, յաւերժական այն սիրով, որ կարող է աշխարհի շրջել, յեղափոխել:

Ներսից է փրկութիւնը, Աստուած այդպէս է գործում…

Քրիստոս էլ շեշտեց, որ Երկնքի Արքայութիւնը ներսում է: Զղջումն էլ, ցաւակցելն ու ուրախանալն էլ, ինքնամաքրուելն էլ ներսից է:  Ապաշխարութեամբ հոգու հայեացքը դէպի Աստուած եւ դէպի մեր մերձաւորը դարձնելը, զգաստանալն ու սխալների վերանայումով ազնիւ ինքնախոստովանանքն էլ ներսից է:

Մենք կապուած ենք եւ պատասխանատու միմեանց նկատմամբ՝ ինչպէս մէկ մարմնի անդամներ: Աստծոյ Հոգու շնորհն է գործում Աստծով իրար սիրող մարդկանց մէջ: Այն ժամանակ

Աստուած, Ում մեր անձնապաշտ, մարդապաշտ, կուսակցապաշտ մօտեցումով վանել էինք մեր համայնական կեանքից, կառաջնորդի, կզօրացնի, կմխիթարի, կբժշկի: Իր սիրոյ համախմբումի մէջ հայրենասիրութիւնն էլ կվերածուի իսկական հայրենաշինութեան, վերականգնումի եւ յաղթանակի:
*«Այսպէս է, որ երկրայիններն ուղղեցին իրենց շաւիղները, սովորեցին այն, ինչ հաճելի է Քեզ եւ փրկուեցին Քո իմաստութեամբ»* (Իմաստ. 9:18):

**Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

## DAILY BIBLE READINGS FOR 2025 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

| | |
|---|---|
| 1 December | Sts. Gennaro the Bishop and Mercurius the Warrior, and Sts. Hagovig and The mistocles<br>Isaiah 35:4-8; 2 Corinthians 3:18-4:6; Luke 21:12-19 |
| 2 December | Sts. Cornelius the Centurion, Simeon the relative of Christ, Bishop Polycarp of Smyrna, and the Martyrs who perished in the East<br>Wisdom 1:1-7; Jeremiah 16:16-21; Acts 1:12-14; Mark 6:6-13 |
| 3 December | 1 Thessalonians 5:1-11; Luke 13:10-17 |
| 4 December | Paulus, Paul, Magar, Evagrius, John (Kpetsi), John the Short, Nilus, Arsenius, Siseos, Daniel, Serapion, Macarius, Poeman, and the other Holy Fathers of Egypt<br>Proverbs 21:15-25; Isaiah 19:19-21; Hebrews 11:32-40; Matthew 10:37-42 |
| 5 December | 1 Thessalonians 5:12-28; Luke 14:1-11 |
| 6 December | St. Nicholas of Smyrna the Wonder-workers<br>Ezekiel 3:16-19; 2 Timothy 3:10-15; John 10:11-16 |

### Announcement

## Organist / Keyboard Player Required

St Yeghiche Armenian Church Parish is looking to engage an enthusiastic Organist / Keyboard player to assist and enhance our Sunday Divine Liturgy and its glorification of our Lord.

The position entails playing on Sunday's Divine Liturgy, and other religious events throughout the Year.

Fees by negotiation – Immediate start

If interested please contact
Choirmaster Mr Aris Nadirian or
Parish Council Chairman Mr Viken Haladjian
by calling 020 73738133 or by emailing to
info@styeghiche.org.uk



The Church organ is the second largest in the country, lavishly carved and decorated with prefigures of Gothic architecture. It is noteworthy that Sir Arthur Seymour Sullivan, illustrious English composer was the first organist at St Yeghiche Armenian Church (previously known as St. Peter's Church) who played the first version of the existing organ from 1867 to 1871. .

## Announcement:

Our Resident Organist Mr Razmig Melkonian, will be moving soon to Birmingham to pursue his music studies. St Yeghiche Armenian Church is looking for a talented pianist or keyboard player to fulfill the position and enhance our Sunday Divine Liturgy and glorify our Lord.

If you are, or know of any such person please inform member of our Parish Council or Mastro Aris Naderian in order to contact and invite him/her to join the choir.

Your kind attention and assistance is highly appreciated. ***Thank you***

# CHRISTMAS

## CAROL EVENING

**14TH DECEMBER 2025** STARTING AT **18:30**

By The Choir of St Yeghiche Armenian Church
Under the direction of **Mastro Aris Naderian**
at
**St Yeghiche Armenian Church**
13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB
**To feature Carols and popular arias from Handel's Messiah**
For more info: 020 7373 8133

**ENTRANCE FREE**



Armenian Apostolic Church commemorates **St. Nicholas** (Sourp Nigoghos)

# SHORT BADARAK & SENIORS' GATHERING

*A time for prayer, fellowship, and sharing blessings before Christmas!*

# SATURDAY 6 DECEMBER

## **Liturgy:** 10:30 A.M.

## **Lunch:** 1:30 P.M.

**ARMENIAN DIOCESAN CENTRE**

107 EALING RD, TW8 0LF, BRENTFORD

*If you would like to request a* ***Hokehankist*** *(memorial prayer) to commemorate your loved ones, please notify us in advance.*

*As spaces are limited, kindly* ***RSVP*** *by* ***24 November 2025.***

info@armenianchurch.org.uk

## 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

- By Vigen, Liana and Adrine Andreasian, Vacheh, Ani , Christopher & Christineh Andreasian, Carol, Arin & Arlen Telimi Andreasian , for the souls of their Mother who was also a loving Grandmother the late **SEDIK VARTKHATOON ANDREASIAN** on the 40th day memorial service of her passing, also for all the old and new deceased members of the **ANDREASIAN** Family.
- By Karaian Family for the soul of their dear Brother who was also a loving Uncle the late **HAROUTUNE KARAIAN** on the 40th day memorial of his passing, also for their Parents the late **PEROUSE** and **GIRAGOS KARAIAN** on the anniversary of their passing, also for all the old and new deceased members of **KARAIAN, BOGHOSIAN** and **ASHJIAN** Families.
- By Keghvart and Vahe Vartanian and family, Lena Vartoukian and family, Dickran Bohdjalian and family for the soul of their Wife, who was also a loving Mother and Sister the late **CECILE VARTANIAN (Սէսիլ Վարդանեան)** on the anniversary of her passing, also for all the old and new deceased members of the **VARTANIAN** family.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

## General

***St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs***
Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation,
Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

**Hokehankist Requests:** To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.
Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

**In Liu of Flowers**: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

**Donations** for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;
-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

**Membership:** St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk